

# ԵԿԵՂԵՑՈՎԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒԻՆ:

## ՄԱՅՐ ԱԹՈՒՄ

Յունիոնի 6-ին, Հոգեգալուտեան կիւրակէ օրը նշանակուած էր Հանդուցեալ Խրիմեան Մկրտիչ կաթուղիկոսի մահարձանի բացումն և նոր Վեհարանի հիմնարկէքը:

Երեանից հրաւիրուած էին պլ. Նահանդապետը, թեամական խորհրդի անդամները և ոյլ անձինք: Տփխիսից եկել էին պլ. Ա. Յ. Մանթաշեանի կառավարիչը և Վեհարանի կառուցման ճարտարապետ պլ. Պ. Զոհաբեանը:

Ա. պատարագից յետոյ, որ ժամանում էր մագիստրոս Տ. Մեսրոպ եպիսկոպոսը, եկեղեցական թափորը գլուխ ունենալով Վեհափառ Հայրապետին, գուրս եկուատածորից և խմբուեց Հանդուցեալ Մկրտիչ կաթուղիկոսի գերեզմանի շուրջ, Վեհ. Հայրապետը կանգնեց հովանուտակ, որի սիւները բռնել էին Երեանից եկուած առաջտուր չորս անձինք: Ահագին բազմութիւնը եկած Երեանից և շրջակայ գիւղերից Վաղարշապատի ժաղովրդի հետ բռնել էին Մայր Տաճարի ընդարձակ բակը:

Կատարուեց սահմանուած հանդստեան պաշտօնը, որի ժամանակ Հանդուցեալ Հայրապետի տապանաքարը ծածկուած էր ճոխ գիւղարդով, վերան դրուած Հայրապետական խոյր, աւետարան, խաչ և ոյլ եկեղեցական սպասներ:

Խնչպէս յայտնի է Հանդ. Մկրտիչ Կաթուղիկոսը թագուեց Մայր տաճարի ղանդակատան հարաւային կողմը՝ Հանդ. Ներսէս Ե. Կաթուղիկոսի գերեզմանի մօտ:

Տապանաքարը սպիտակ մարմար է, ու Սինօդի յանձնարարութեամբ Տփխիսի առաջնորդ Տ. Գարեգին Արքապիսկոպոսը հանդ, Հայրապետի գերեզմանի համար պատ-

քաստել տալով ուղարկել էր։ Տապանաքարը հաստատուած է կապոյտ կարծրաքար (գրանիտ) պատուանդանի վերայ և ռւուցիկ, շատ գեղեցիկ կերպով, դուրս են բերուած հայրապետական նշանակները, եզերազարդերը և տապանագիրը։ Տապանագիրը, որ խմբագրել է ներկայ Վեհափառ Հայրապետը, հետեւ եալն է.

## ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

### ՄԿՐՏԻՉ Ա.

### ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ

Վ. Ա. Ն Ե Ց Ի

ԴՐԻԱԳՈՂ ՎՇՏԻՑ ՀԱՅՐԵՆԵԱՑ ՀԱՅՈՑ

Ծ Ն Ե Ա. Լ.

Ի 4-Ն ԱՊՐԻԼԻ 1820 ԱՄԲ

Վ. Ա. Խ Ճ Ա. Ն Ե Ա. Լ.

Ի 29-Ն ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1907 ԱՄԲ

Հանգստեան պաշտօնից յետոյ և կեղեցական թափօրը Պ. Նահանգապետի և խուռն բազմութեան ուղեկցութեամբ դուրս եկաւ տաճարի բակից Տրդատայ դարւազայսվ. ապա հրապարակից ուղղուեց դէպի նոր Վեհաքանի տեղը և կանգ առաւ կառուցանելի Վեհաքանի գլխաւոր մօւարի մօտ Վեհափառ Հայրապետը բարձրացաւիւր համար պատրաստուած գահաւորակի վերայ և կանգնեց ամպհովանու տակ, հոգեորականութիւնը աջ ու ձախ։

Հիմնարկութեան օրհնութիւնը կատարելուց յետոյ Վեհ. Հայրապետը, Պ. Նահանգապետը և եպիսկոպոսները իջան հիմքի մէջ։ Առաջին քարը դրեց նորին Ա. Օծութիւնը, երկրորդը՝ Պ. Նահանգապետը, ապա եպիսկոպոսներն ու Պ. Ա. Մահթաշեանի կառավարիչ պ. Շահու-

մեանը՝ մի մի քարու Հիմքի մէջ, ուր առաջին քարերը դրուեցին և շաղախով ամրացան, զետեղուեց մի պղնձեալ տախտակ հետեւեալ մակագրութեամբ:

**ՅԵՄԻ ՏԵՇՈՒ 1910 ԵՎ ՀԵՅԱՑ  
ԱՅՆԹԻ Ե ԵՄՈՒԵԾՆԻ ՅՈՒՆԻՄ ՅԵ-  
ՄԻՄ ՀԲԱՇԵՓԵԾԻ ՏՕՆԻ ՀՈԳԵԳԵ-  
ԼՈՑԵՐՆԻ ԹԵԳԵԿՈՐՈՒԹԵԾՆ ԵՄՈ-  
ԼԸ Բ. ԿԵՅՍԵՐ ՀԵՄԵՅԾՆ ՈՅԻՄԱՅ Ի-  
ՓՈԽԵՎԵՅՈՒԹԵԾՆ ԿՈՎԿԵՍՈՒ ԿՈՄՍ  
ԵԼԵՐԻՕՆ ԵՎԸՆԱՎՀԶ ՎՈՐՈՆՅՈՎ  
ԴԵՇԿՈՎՀ ԵՎ Ի ՀԵՅՐԵՊԵՏՈՒԹԵԾՆ  
Տ. Տ. ՄԵՏԹԵԱՍ Բ. ԿԵԹՈՒԴՅԱԿՈՍ Ե-  
ՄԵՆԵՅՆ ՀԵՅԱՑ ՀՏՈՒ ԵՐԿԵ ՎԵ-  
ՀԵՐԵՆԻՄ ԾԱԼԻԿԵՎ ԵՎ ԵՐԴԵՄԲՐՎ  
ՄԵՆՈՒԳԱՐՉ ԲԵՐԵՐՐԻԿ ԵՊԼԵՔԱՆ-  
ԴԻ Յ. ՄԵՆԹԵՇԵՅՆԻ:**

Այս գործողութիւնից յետոյ վեհ. Հայրապետը, որ  
արդէն գուրու էր եկել հիմքից և իւր համար պատրաս-  
տուած գահաւորակի վերայ էր, բացատրեց Հայրապետա-  
նոցի նշանակութիւնը աղդի լրութեան վերաբերութեամբ։  
Օրհնեց թանկագին կեանքը նորին կայսերական Մեծու-  
թեան նիկօլայ Բ. Կայսեր, որի հովանու տակ բոլոր հպա-  
տակները, ընդ որս և հայերը, խաղաղութեան մէջ անդու-  
րութեամբ զբաղւում են իրանց առանին և հասարակա-  
կան գործերով, շէնանալով և շէնցնելով ոռւսական պե-  
տութեան մեծ հայրենիքը, Ռուսաստանը, քաղաքակրթա-  
կան ամենատեսակ հաստատութիւններով, որոնցից մէկն  
էլ այս հայրապետանոցն է, որի հիմնարկութիւնն է կա-  
տարում։

Օրհնեց նորին կայսերական Մեծութեան կովկասեան-  
փոխարքայ Գրաֆ Ի. Վ. Վորոնցով-Դաշկովի լեանքը, որ

իրեւ իսկական ներկայացուցիչ Ամենողորմած Կայսեր՝ ուղորմածօրէն և Հայրական խնամքով կառավարում է Կովկասի բազմազան և բազմալեզու ազգերը եղբայրական սիրով և համերաշխութեամբ։

Օրհնեց ներկայ գտնւող Պ. Նահանգապետին, որ իւր երկարամեայ պաշտօնավարութեամբ Երեանում հանդիսացել է բոլոր լաւ ձեռնարկութիւնների քաջալերից։

Օրհնեց Պ. Ա. Մանթաշեանցին, որի առատ զոհաբերութեամբ շինուել են և շինւում են շատ եկեղեցական, հասարակական և դպրոցական շինութիւններ, օրինակ Փարիզի հայ եկեղեցին, Ներսիսեան դպրոցի մեծածախ շենքը, կառուցւում է այժմ Վեհարանը, նորոգուելու է Պ. Էջմիածնի Մայր տաճարը և ին նորասուով ուսել և ուսանում են բազմաթիւ երիտասարդներ բարձր և միջնակարգ դպրոցներում։

Օրհնեց բոլոր հայ բարեգործներին և հայ ժողովրդին, որոնք ՚րանց անհատական և միահամուռ նուէրներով պահում պահպանում են բոլոր եկեղեցական, դպրոցական, բարեգործական և ընդհ. հասարակական հաստատութիւնները, և բարեմազթելով հանգուցեալներին յաւիտենական յիշատակ իսկ կենդանիներին ու ներկայ հանդիսականներին երկար, անդորր ու առողջ կեանք՝ կնքեց իւր օրհնութիւններն ու բարեմազթութիւններն «Պահպանիչով»։

Թափօրը վերագառնալով հիմնարկութեան տեղից՝ Վեհափառ Հայրապետին առաջնորդեց գէպի Վեհարան, և հիմնարկութեան հանդէսը վերջացաւ ճաշիցյետոյ ժամը 1<sup>1</sup>|<sub>2</sub>-ին։

Ժամը 2<sup>1</sup>|<sub>2</sub> միաբանութեան սեղանատանը ճաշ տրուեց, որին մասնակցեցին Պ. Նահանգապետը, Մինօգի ծառայողները, Վաղարշապատի վարչական, դատաստանական և դինուրական հաստատութիւնների գլխաւորները, Տըփիսիսից եկած ճարտարապետն ու պ. Մանթաշեանի կառավարիչ պ. Շահումեանը, Երեանից եկած հիւրերը, Ճեմարանի ուսուցչական խումբը, և Վաղարշապատի հասարակութեան ներկայացուցիչները։

Վեհափառ Հայրապետն էլ պատուեց սեղանը իւր ներկայութեամբ:

Առաջին բաժակը Նորին Սրբովմիւնը առաջարկեց Թագաւոր Կայսեր կենացը, բ. բաժակը պ. Նահանգապետը առաջարկեց Վեհ. Հայրապետի կենացը, Նորին Վեհափառութիւնը գ. բաժակը առաջարկեց Նորին կայսերական Մեծութեան Կովկասեան Փախաչքայ ի. ի. Վօրոնցով — Դաշկովի կենացը և գ. բաժակը աւուր հանդիսի պատճառ պ. Ա. Մանթաշեանի և Հայ ազգի կենացը: Ոինօդի աւագ անդամ Տ. Գէորգ արքեպիսկոպոսը առաջարկեց Պ. Նահանգապետի կենացը, իոկ պ. Նահանգապետը Գէորգ Սրբաղանի կենաց, Առաջարկուեց և Ա. Էջմիածնի հաստատութեան բաժակ, որի ժամանակ երգուեց «Էջմիածնն ի հօրէ» շարականը.

Այսուհետեւ Վեհ. Հայրապետը մեկնեց սեղանատառնից, և ճաշկերոյթը աւելի ընտանեկան բնոյթ ստացաւ:

Վեհարանի ճիմնարկութեան առիբով Վեհ. Հայրապետը պ. Ա. Ի. Մանթաշեանին ուղղեց նետեւեալ օրինութեան նեռազիրը:

### Փ Ա. Բ Ի Զ

Ա. Ռ է ֆ ս ա ն դ ր Մանթաշեանին,

Այսօր հանդիսաւորապէս օրհնեցինք Նոր Վեհարանի հիմքը Նահանգապետի ներկայութեամբ: Օրհնում ենք և Զեր թանկագին կեանքը ու Զեր զաւակներին: 6 յաւնիսի 1910 թ., ս. Էջմիածն:

ՄԱՏԹԵՈՍ Բ. ԿՈԹՈՒՂԻԿՈՅ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Պ. Մանթաշեանից պատասխան ստացուեց բա այս.

### Է Զ Մ Ի Ա Ծ Ի Ն

Նորին Մըրութիւն Կարուղիկոսին.

Խորապէս զգացուած Զեր հեռագրից, Երկար և գա-

ուաւոր կեանք եմ մաղթում ի սջտէ Զերդ Վեհափառութեան ի պայծառութիւն Հայաստանեայց սուրբ եկեղեցւոյն 7 յունիսի 1910 թ. Փարիզ.

ՄԱՆԹԱԾԵԱՆ

Այս յունիսի 14—20-ը հանդիսաւոր տօնական օրեր էին: Տօնուեցցին Ա. Հոփփոխմեանց, Ա. Գայիանեանց, Ա. Յովհաննու Կարապետի և Աթանագինեայ եպիսկոպոսի, Ա. Դրիգոր Լուստուրչի վիրապից ելնելու և Ա. Էջմիածնի հիմնարկութեան յիշատակները, որոնք շատ թանկ են հայ ժարդու համար, որովհետեւ մեր յիշովութեան մէջ վերատին արծարծում են ամբողջ Հայաստան աշխարհի քրիստոնէական լուսով լուսաւորուելու պատմութիւնը:

Մայր Աթոռոյս միաբանութիւնը ներկայ եղաւ ըստ սովորութեան Ա. Հոփփոխմեանց և Գայիանեանց վանքերում արանց տօնի նախատօնուկին և ո. պատարագին: Ա. Հոփփոխմեանց վանքում ո. պատարագին ներկայ էր և աղջիս Վեհափառ Հայրապետը: Տօնի օրերը Ա. Կուսանաց վկանարաններում իրեւում էին մեծ բազմութեամբ ժողովուրդներ ու ուխտաւորներ մերձակայ տեղերից, և Տաճկառատանից:

Մեծ հանդիսաւորութեամբ կատարուեց և Ա. Էջմիածնի տօնը, Երեկոյեանը Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափօրով եկաւ եկեղեցի: Ա. պատարագից յետոյ տաճարում կատարուեց մաղթանը խուռն ժամաւորների ներկայութեամբ:

Բազմաթիւ ուխտաւորներ կային արձակայ գիւղերից, Ֆրեանից և Տաճկառատանից:

Յունիսի մէջ այցելեցին Մայր Աթոռու և տեսան կարեար հաստատութիւններն ու հսութիւնները բարձրագոյն, միջնակարգ և ծխական գորոցների բազմաթիւ ուսանողներ և ուսանողուհիներ իրանց ուսուցչապետների հետ և աշակերտ աշակերտուհիներ իրանց գաստիարակների հետ և արժանի հիւրընկալութիւն գտած լինելով՝ հեռանալիս յայտնեցին շնորհակալութիւն:

Այս տարի Մայր Աթոռի ձեմարանի լսարանական դասընթացքը աւարտեցին Արաջնան Բագրատ զարսեցի, Արահամեմեան Աբէլ դաշըռուռունցի, (Սուրմալուի դաւառ), Աղաջանեան Արամ օշականցի, Ամատունի Եղուարդ Կ. Պոլսեցի, Գասպարեան Աշոտ Ժաւորիզեցի, Կիտուրեան Արս սէն Հին-բայազէտցի, Մելիք Աղաջանեան Ալէքսան զարադացի (Ատրագատական), Յարութիւնեան Յակոբ Խաստուրեցի (Բագրեանդ), Տէր Մինասեան Վազարչակ զփչազցի (Ալէքսանդրօլիի դաւառ), Տէր Դուկասեան Ատհակ Հուշեցի, Տէր Ստեփանեան Սմբատ բայրուրդցի, Ընդամենը 11 հոդի, որոնք և յունիսի 13-ին, կիւրակէ օրը ու պատարագից յետոյ ըստ սովորութեան հանդիսաւոր հոգեհանդիստ կատարեցին ձեմարանի հիմնադիր երջանկայիշատակ Գէորգ. Կաթուղիկոսի գերեզմանի վերայ և Վեհափառ Հայրապետին ներկայանալով՝ Նորին Սրբութեան օրհնութեան հետ ստացան իրանց մրցանակագրերն»

Յունիսի 17-ին գիշերը անյայտ չարագործներ հարաւային գոտան մօտի լուսամուտի վանդակներից անցնելով մտել էին Մայր Տաճարը և աւագ բեմի լուսամուտի վահագուի մի ձողը կտրելով՝ կամեցել էին մտանց խորանի միջով մտնել ժանդարանը, երեխ նպատակ ունենալով գոհհարեցէները գողանալ, որովհետեւ ուրիշ ոչ մի բանի ձեռք չէին տուել։ Բարեբախտաբար չէին կարողացել մտնել թանգարան և պակասած ոչինչ չերեաց։ Ոստիկանութիւննու դատաստանական քննիչը տեղումը գիտեցին ամեն բան և օրինական արձանագրութիւնն կազմեցին իներկայութեան Սինօդի և գանական կառավարութեան անդամների, Հայրապետական դիւանապետի և լուսարարի։

Յունիսի 26-ին, շաբաթ օրը Վեհ. Հայրապետը ուղեաւորուեց Տիխիս եկեղեցական գործերով։ Նորին Սրբութեան ուղեկցում են մագիստրոս Մեսրոպ Եպիսկոպոսը, դիւանապետ Բագրատ վարդապետը և դաւազանակիր Մեսրոպ վարդապետը, Վեհափառ Հայրապետին մինչեւ

Էջմիածին կայարանը յուղարկեցին Սինօդի անդամներից Յուսիկ Արքեպիսկոպոսը, Բարգէն վարդապետը և Վանական կառավարութեան նախագահ Ներսէս վարդապետ Մէլիք-Թանգեան, միաբաններից՝ Խորէն և Արտակ վարդապետները որպէս հայրապետական գլուխ կրողներ։

Նորին Վեհափառութիւնը նախ քան մեկնելը յառնում Տ. Գէորգ արքեպիսկոպոսի, որպէս Սինօդի նախադահողի և որպէս իւր Տեղապահի յունիսի 24-ին թ. 1601 տուեց հետեւով կոնդակը.

### ՄԱՍԹԵԱԾ ՇԱԽԱԾ ՇԽՈՈԽՈՒ ՎՐԵՍՈՈՒ . . .

Ամենապատիւ Տեղապահի մերում Տ. Գէորգ Արքեպիսկոպոսի Սուրբնեան, հարազատի Մայր Աթոռոյս նուիրեմբ ողջոյն հանգերձ Հայրապետական օրհնութեամբ։


Հանդերձեալ գոլով Տեառն յաջողութեամբ ի 26-րդում աւոր ամսեանս յունիսի այց ելանել հօտին մերում ի Տիլիս, յանձն առնեմբ բարձու Սրբազնութեան Զերում արձակել զօնադիրս Սինօդի Սրբոյ Էջմիածնի ստորագրութեամբ Զերով իբրև նախագահող Ատենիս Ռւնել աշալուջ հսկողութիւն առ բացակայութեամբ մերով ի վերայ գործանութեանց ամենայն պաշտօնէից հաստատութեանց Մայր Աթոռոյս և առհասարակ ի վերայ տնտեսական կառավարութեան Մեծի տանս, որոյ զեկավարութիւն ըստ ամենայն մասանց ենթարկի վերին տեսչութեան և իրաւոնց Ամենապատռութեան Զերոյ ցվերագարձ Մեր ի Մայր Աթոռու Ռւնել խիստ հսկողութիւն ի վերայ Մայր Տաճարի և առհասարակ ի վերայ կարգապահութեան և ճիշտ կատարման պարտուց մէն մի պաշտօնէի Մայր Աթոռոյս և կարգագրել ցուցանել զպատշաճ և զվայելուչ ընդունելութիւն մերազնեայ և օտարազգի պատռուուր և կարեօր հիւրոց և ուխտաւորաց Մայր Աթոռոյս։

Լիայոյս եմք և միանգամայն աներկրայ, եթէ Ամենապատռութիւն Զեր բազմամեայ փորձառութեամբ իւրով և աշալուրջ հեռատեսութեամբն գուն գործեսցէ անխաթար և անսայթակ յառաջ վարել զամենայն գործս Մեծի

Տանս ի պայծառութիւն Մայր Աթոռոյու և ի մխիթարութիւն Զեր և Մեր։

Ողջ լեբուք, պահպանեալ և զօրացեալ ի խնամս Հօրն Երկնաւորի և օրհնեալ յաւէտ ի Մէնջ, Ամէն։

ՄԱՍԹԷՌՈ Բ. ԿԱԹՈՒԳԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ.



## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ՀԱՅ ԵԿԵՊԵՑԻ.

ՕՄՏ. ԵՐԵՊՓ. ԺՈՂՈՎՈՒՄ ՀԱՅՈՅ ԽՆԴԻՐՆԵՐԸ

(Բիւզանդիան)

Տրթ. Ե. Տաղաւարեան էֆ. ըսելով թէ հին ոչժիմին օրով իսկ Ազգ. հիւանդանոցի և Գալֆայեան որբանոցի տուուած հացի և միսի պարէնը հիմա գաղուցուցուած է, առաջարկեց որ այս նողաստը վերահաստատուի: Տրթ. Իրզա Թէվիթիդ էֆ. ևս համամիտ գոնուելով առաջարկեց ոս տարեկան 500,000 դրշ. ի վերոյիշեալ գումարը անկողինի թիւերուն համեմատութեամբ բաշխուի ոչ—հոլամ հասարակութեանց հիւանդանոցներուն։

Վարդգէս էֆ. ձայնակից ըլլալով ըստու թէ շատ տարիներ չարչարուած ու տանջուած Հայ Ազգին վրոյ տրգահատելու ժամն եկած է այլեօս նախարարը խոստացաւ անկողինի թիւելու համեմատութեամբ բաշխում ընել և առաջարկեց ելեմտացոյցի այս մասին մէջ աւելցնել 162,400 դրշ. որբանոցի մը շինութեան, մէկ միլիոն դրշ. աշխատանոցներու հաստատման և 2 միլիոն դշ. Հայոց հոկիզեալ եկեղեցին ու վարժարանին նորօգութեան Առունացի մէջ, անցեալ տարուան յաւէտ աւաղելի ջարդերուն վնասները մեղմացրած ըլլալու համար Ոչ ոք գիտողութիւն ըստու այս առաջարկին, միայն Հօճա Վէհպի էֆ. քիչ մը քրթմնից, բայց Վարդգէս էֆ. պատասխանը տուու հարցնելով թէ ջարդուած ազգի մը համար քիչ մը գրամ յատկացուելուն ալ պիտի գժկամակից և վերջոյ գումարը 4 միլիոն դրշ. ի հասնող այս վարկերուն ամբողջութիւնն